ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » ---------- 2021թ. N -Ա

ՈՐՈՇՈՒՄ
«ՄԱՐԱԹՈՒԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետով և 25-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Մարաթուկ» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), (գտնվելու վայրը՝ Հայաստան 0097, ք. Երևան, Նորաշեն թաղամաս հ. 16/2, գրանցման համարը՝ 271.215.55710):

2. Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարային հանձնաժողով:

3. Լուծարային հանձնաժողովին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Կազմակերպության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՐԱԹՈՒԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Երևանի ենթակայության մշակութային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման, Երևան համայնքի կողմից մատուցվող մշակութային ծառայությունների հասցեականության, ինչպես նաև առկա ռեսուրսների նպատակային օգտագործման անհրաժեշտությունից ելնելով:

«Մարաթուկ» մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը հանդիսանում է «Մեցոպիանո» ՀՈԱԿ-ի իրավահաջորդը՝ Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. հ. 586-Ա որոշման համաձայն:

«Մեցոպիանո» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է Աջափնյակ համայնքի «Ալան Հովհաննես կամերային նվագախումբ» ՓԲԸ վերակազմակերպման ճանապարհով վերակազմավորման միջոցով՝ Աջափնյակի թաղապետի 29.04.2002թ. թիվ 60 որոշման համաձայն:

Գտնվելու վայրը՝ Հայաստան 0097, ք. Երևան, Նորաշեն թաղամաս հ. 16/2 (գործում է «Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքում, ընդհանուր տարածքի մակերեսը՝ 230 քմ):

Կազմակերպության գործունեության նպատակներն են՝ երաժշտական, պարային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության իրականացումը, մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության, ընդհանուր զարգացման տարբեր ձևերի վճարովի ուսուցման իրականացումը և այլն:

Կազմակերպության եկամուտը 2021թ. կազմում է 14363.7 հազ. դրամ, որից՝ Երևան քաղաքի բյուջեով հատկացվող սուբսիդիան՝ 13644.9 հազ. դրամ է (մոտ 95%), վճարովի ծառայություններից ձևավորված եկամուտը՝ 360.0 հազ. դրամ: Կազմակերպությունն ունի 11 հաստիքային աշխատակիցներ, միջին աշխատավարձը կազմում է 101,3 հազ. դրամ (ներառյալ հարկերը):

Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կազմակերպության

մատուցած ծառայությունները մեծ հետաքրքրություն չեն առաջացնում, չկա պահանջարկ շահառուների մոտ (ներկայում իրականացվում է ընդամենը 4 սովորողի վճարովի ուսուցում):

Շուրջ տասը տարվա գործունեության ընթացքում Կազմակերպությունը չի կարողացել լիարժեքորեն իրականացնել կանոնադրությամբ վերապահված գործառույթները, չեն ապահովվել բավարար մակարդակի ոչ ֆինանսական ցուցանիշներ, ինչի մասին վկայում է մեկ երեխայի սպասարկման գծով աշխատավարձի և ծառայությունների մատուցման պայմանագրերով ներգրավված աշխատողների վճարների բյուջեի ծախսի ցուցանիշը, որը ավելի քան 26 անգամ բարձր է այլ նմանատիպ կառույցների ծախսից՝ կազմելով տարեկան 3274.0 հազ. դրամ (միջին ցուցանիշը՝ 123.0 հազ. դրամ է): Նշված ցուցանիշը փաստում է համայնքի կողմից տրամադրված ռեսուրսների և ֆինանսական միջոցների (գործունեության տարիների ընթացքում՝ գրեթե 100 մլն ՀՀ դրամ) օգտագործման անարդյունավետության և ոչ նպատակայնության մասին:

Կազմակերպության կողմից կանոնադրական գլխավոր գործառույթի չիրականացումը ռիսկային չի գնահատվել, քանի որ վարչական շրջանում գործում են արտադպրոցական դաստիարակության և համայնքային ազատ ժամանցի կազմակերպման ծրագրեր իրականացնող 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ և 3 երաժշտական և արվեստի դպրոցներ:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է ընդունել «Մարաթուկ» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՄԱՐԱԹՈՒԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Մարաթուկ» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՄԱՐԱԹՈՒԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Մարաթուկ» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ